ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/42

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Ատլանտ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Վասիլյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7947-2019 գրությամբ «Ատլանտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 07.05.2019թ. թիվ 352 գրության հիման վրա, 15.05.2019թ. «Ատլանտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 07.05.2019թ. թիվ 352 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019 թվականի փետրվարի 27-ին հրապարակվել է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի համար խորքային հորի հորատման» աշխատանքների իրականացման N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի արդյունքում մրցույթով 1-ին տեղ զբաղեցրած «Ատլանտ» ՍՊԸ-ին ս.թ. ապրիլի 5-ին ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված 15 աշխատանքային օրվա ընթացքում «Ատլանտ» ՍՊԸ-ն պայմանագիր չի ներկայացրել: Պայմանագիր կնքելու վերջնաժամկետին ս.թ. ապրիլի 26-ին, «Ատլանտ» ՍՊԸ-ն հիմնադրամին ներկայացրեց մի գրություն նախահաշվի հորատման բաժնում նախագծային փոփոխություն կատարելու խնդրանքով, որին ի պատասխան ս.թ. ապրիլի 29-ին հիմնադրամի կողմից ուղարկվել է պատասխան գրություն, որով «Ատլանտ» ՍՊԸ-ին հայտնվել է, որ նշված փոփոխությունը չի մանում հիմնադրամի իրավասության շրջանակների մեջ: Ուստի «Ատլանտ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքել հիմնադրամի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Բ ենթակետը:»:

3. <u>«Ատլանտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.05.2019թ. գրությամբ դիմել է «Ատլանտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7947-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Ատլանտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մասնակցելով նիստին, բանավոր հայտնել է, որ մրցույթի հրավերով նախատեսվել է, որ հորատումը պետք է կատարվի УКС-22 և УКС-30 հարվածաճոպանային հաստոցներով: Գեղարքունիքի մարզի ներքին Գետաշեն համայնքի խորքային հորը նույնպես նախատեսված է ռոտորային եղանակով: Սակայն գնահատող հանձնաժողովին ներկայացրած դիտողություններից հետո ռոտորային 1ԲԱ-15 հորատման հաստոցի կողքին նախագծային կազմակերպության կողմից ավելացվել է /մանատիպ-սարք/ եզրույթը, որի արդյունքում «Ատլանտ» ՍՊԸ-ն կարողացել է մասնակցել մրցույթին և երեք մասնակիցների մեջ գրավել առաջին տեղը:

Ընկերության ներկայացուցիչը նաև հայտնեց, որ փաստացի որևէ արգելք չի եղել պայմանագիր կնքելու համար, սակայն չի կնքել պայմանագիր, քանի որ Պատվիրատուն չի համաձայնվել կատարել իր կողմից նշված փոփոխությունները:

«Ատլանտ» ՍՊԸ-ն 26.04.2019թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով միջամտել և նախագծային փոփոխություն կատարել նախահաշվի հորատման բաժնում:

4. <u>ՍՑ-LO-2019/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի համար խորքային հորի հորատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ատլանտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.03.2019թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ատլանտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 29.03.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ատլանտ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկվել է անգործության

ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Պատվիրատուն 05.04.2019թ.-ին դիմել է «Ատլանտ» ՍՊԸ-ին և հայտնել է, որ վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

Մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր երկու օրինակից և ներկայացնել կից գրությունով պայմանագրի ապահովման հետ՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

«Ատլանտ» ՍՊԸ-ն 26.04.2019թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով միջամտել և նախագծային փոփոխություն կատարել նախահաշվի հորատման բաժնում:

Ի պատասխան Մասնակցի 26.04.2019թ. գրության, Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգը նշված համայնքի պատվերով մշակված նախագծի հիման վրա, ուստի նախագծա-նախահաշվային փաստաթղթերում փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ է դիմել Ներքին Գետաշենի համայնքի ղեկավարությանը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7947-2019 գրությամբ «Ատլանտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից խորքային հորի հորատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով «Ատլանտ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն 05.04.2019թ.-ին դիմել է «Ատլանտ» ՍՊԸ-ին և առաջարկվել է կնքել պայմանագիր երկու օրինակից և ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

«Ատլանտ» ՍՊԸ-ն 26.04.2019թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով միջամտել և նախագծային փոփոխություն կատարել նախահաշվի հորատման բաժնում:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ընտրված/հաղթող/ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ատլանտ» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7947-2019 գրությամբ «Ատլանտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ատլանտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**